ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N02/01.91/3131-18 "31" 05 2018 թ.

«Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ին
Էլ. հասցե՝ armana6@mail.ru

Հարգելի պարոն Ասմանգուլյան

ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/26 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ՀՀ մշակույթի նախարարության և «Արման Ասմանգուլյան» Ա/Ձ-ի միջև 16.04.2018 թ. կնքված N «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/26» ծածկագրով պետական գնման պայմանագրի 7.1-ին կետի երկրորդ պարբերությամբ սահմանված է, որ. «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:»:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 25.05.2018թ. թիվ 03/26-2/9427-18 գրությունը (կցվում է) և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 1454-Ն որոշմամբ հաստատված «Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատման» կարգի 10-րդ կետով՝ ՀՀ մշակույթի նախարարությունը միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Ռ.Ասատրյան
Հեռախոս՝ (011) 58-51-78

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 222, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
պարոն Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Ձեր 18.05.2018թ. N 02/01.91/2895-18
գրության վերաբերյալ

Հարգելի պարոն Մուրադյան

Հայտնում ենք, որ ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/26 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնային առաջարկին կից գնացուցակ կամ այլ փաստաթղթեր չեն ներկայացվել և մասնակցի կողմից համակարգում որպես գնային առաջարկ է ներկայացվել ոչ թե 6020 (վեց հազար քսան), այլ 10080 (տաս հազար ութսուն) ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/26 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտմամբ՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորվել են մեկ չափաբաժնում:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք՝ ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/26 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ հաշվետվությունը չի կարող հաստատվել էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության համակարգում, իսկ կնքված պայմանագիրը չի կարող հաշվառվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատ.՝ Պետական գնումների գործընթացի
համակարգման վարչություն
Հեռ. (011) 28 93 20